ԲԱԴԱ ԳԻՒՂԻ ԱՒԵՐՈՒՄԸ

Ե.

Պրիստաւ Շէպիլլօի զեկուցումը Գանձակի Գենեռալ-Նահանգապետին: Նոյն Շէպիլլօի նամակը Тифлисскій Листокъ լրագրին. Նորագոյն պատմաբաններ.

Նոյեմբերի 20—23-ին գոյութեան ճգնաժամի մէջ եղող Բաքան ի զուր փորձ էր անում օգնութիւն հայցել միւս հայ գիւղերից-Զարգալալուից, Գեռաբէգից:

Որպէս զի լուսաբանենք թշուառ հայերի դրութիւնը Զարգալալու և Կազալալի, նոյնպէս և մի քանի ռուս գիւղերում վերոյիշեալ ճգնաժամի բոպէին, ես կբերեմ այստեղ իսկութեամբ երկու նշանաւոր գրութիւն, որոնք ունին պատմական փաստաթղթի նշանակութիւն և որոց հեղինակը ոչ թուրք է և ոչ հայ, այլ ռուս Փաստաթղթերից մէկը մի զեկուցում է, որ տուել է 1905 թուի դեկտեմբերի 7-ին Գանձակի Գենեռալ-Նահանգապետին Գեռաբաղի պրիստաւ Շէպիլլօ, որ տպուած է 1906 թուի յունվարի 22-ին Մշակի № 15-ում: Միւսը նոյն Շէպիլլօի նամակն է Тифл. Листокъ-ի մէջ տպուած 1906 թուի մայիսի 28-ին № 110, որի թարգմանութիւնը գտնում ենք Մշակի 1906 թուի մայիսի 30-ին № 115-ից արտատպելով. Ահա այն.

Գանձակի Գենեռալ-Նահանգապետին տրուած զեկուցում*.

Յայտարարութիւն.

Պատիւ ունիմ հաղորդելու Ձերդ Գերազանցութեան, որ նոյեմբեր ամսոյ 16-ին ես ճանապարհուեցի գէպի Գեռաբէգ ընդունելու ուշաստակը: Տեղ հասնելով նոյեմբերի 17-ին, Գեռաբէգի ուշաստակի կառավարիչ Ալիեվը յայտնեց ինձ, որ Լաբաքենդի բնակիչները Գեռաբէգում հրդեհեցին անտառապահ Աբբաս Գաջիեվին պատկանող 60 սայլ խոտը: Ամսի 18-ին գնալով Լաբաքենդ, ես կալանաւորեցի հրդեհողներին՝ Մօվսում Քերբելայ Ալլահվերդի օղլուն և Կասում Սաղրզ օղլուն և նոյն

* Մշակ· 1906 թ· № 15 Յունուարի 22·

օրն էլ բերի Գետաբէգ ու բանտարկեցի: Իսկ 18-ին երեկոյեան Զարդախլուից հաղորդեցին հեռախօսով, որ գիւղը շըրջապատուած է Թուրքերով և կտորած է սպասում: Եւ որովհետև ես զբաղուած էի հրդեհի գործը քննելով, ուստի խնդրեցի Ալիեվին գնալ Զարդախլուս օգնութեան: Ալիեվը խոստացաւ գնալ: Երեկոյեան ժամի 9-ին երկրորդ անգամ տեղեկութիւն ստացայ, որ հարկաւոր է շուտափոյթ օգնութիւն հասցնել չարդախլուեցիներին: Իջնելով ներքև ու մտնելով բուֆէտը, ես տեսայ այնտեղ Ալիեվին. իմ հարցին թէ ինչու չէ գնացել, նա պատասխանեց, որ գնալ չարժէ, որովհետև աւելորդ նեղութիւն է: Այն ժամանակ ես, հետս վերցնելով հինգ պահակներ, անմիջապէս գնացի Զարդախլուս նոյեմբերի 19-ին գիշերը, ուր ինձ հաղորդեցին, որ Զարջի գիւղը աւերուած է և որ Թուրքերը գնում են դէպի Բաղաբենդ: Միևնոյն օրը ես 8 պահակներով գնացի Ֆրէզեօվկա գիւղը, որտեղ ամբողջ ռուս ազգաբնակութիւնը սարսափահար եղած խմբուել էր եկեղեցու մէջ: Ֆրէզեօվկից ես ճանապարհուեցի դէպի Բաղաբենդ, որը բոլոր կողմից շրջապատուած էր Թուրք հրոսակներով և մտանուած նրանց կողոպուտին ու ջարդին: Գիշերելով Ֆրէզեօվկա գիւղում, յաջորդ օրը ես կանանց ուղարկեցի Սլաւեանկա գիւղը, իսկ տղամարդկանց հրամայեցի պահպանել գիւղը, ուր ես ինքս էլ մնացի: Երբ ամսիս 21-ին նկատեցի, որ Թուրքերը մօտենում են Ֆրէզեօվկա գիւղին, ես պահակներիս հետ միասին գնացի Սլաւեանկա գիւղը. պէտք է աւելացնեմ, որ 20-ին, գիշերը, Բաղաբենդ գիւղի քահանայ տէր Մեսրոպ Ստեփանեանցը յայտնեց, որ նոյեմբերի 19-ին Իւխարի-Ախալլի, Տաշախլի և Դուգարլի գիւղերի Թուրքերը յարձակուեցին Բաղաբենդի վրա, աւերեցին և քշեցին-տարան ամբողջ նախիրը: Նոյն օրը 21-ի երեկոյեան եկաւ Սլաւեանկա Ֆրէզօվկայի քահանան և յայտնեց, որ Թուրքերը խոստացան ռուսներին ձեռք չտալ և ճանապարհուում են դէպի Գետաբէգ: Կէս ժամից յետոյ վազ է վազ եկան 25 հոգի հայեր և խնդրեցին պաշտպանել իրանց, որովհետև Սլաւեանկան արդէն պաշարուած է: Հայերին ես թաքցրի նկուղում: Իսկոյն և եթ երևացին ձիաւորներ, բաղկացած 800 Թուրքերից: Ինձ մօտ վազեցին դուխաբօրները, նոյնպէս և խնդրեցին կրակ չը բանալ նրանց դէմ, որովհետև հակառակ դէպքում գիւղը քարուքանդ կանեն: Միևնոյն ժամանակ դուխաբօրների տանուտէրը խնդրեց տնից դուրս չը գալ: Մինչ այդ Թուրքերը թալանելով երկու խանութ, Օսիպօվի և Մնացականովի, կողոպտած ամբողջ ապրանքը դարսեցին նրանց ֆուրգօնների մէջ ու տարան: Թուրքերը գնալիս նախազգու-

շարքին գուլխաքարներին, որ 22-ին նրանք պէտք է աւերեն հայերի խանութները Գեօտաբէգում: 22-ին ես գնացի Գեօտաբէգ, որտեղ հայերի բոլոր խանութները փակուած էին, իսկ ժողովուրդը հաւաքուած հայոց եկեղեցու մօտ սարսափով սպասում էր թուրքերի յարձակման, իսկ վերջիններս մեծ խմբերով-մօտ 500 հոգի կանգնած էին շուկայում: Երեկոյեան ժամի 5½-ին ես Միսկինլի համայնքի տանուտէրի հետ միասին գտնւում էի հիւրանոցում, այդ միջոցին հրացանի ձայն լսուեց գերեզմանատան կողմից: Իսկ տանուտէրը թեւիցս բռնեց և նախազգուշացնելով, որ հայերը կռւում են, տարաւ դէպի հայերի գերեզմանատան կողմը: Հէնց այդ ժամանակ նորից լսուեցին հրացանի ձայներ և մենք թագնուեցինք առուի մէջ: Այդ ժամանակ մեզ մօտ վազեց պրիստաւը և տարաւ ինձ դէպի այն տեղը, որտեղ կատարվում էր սարսափելի հրացանաձգութիւն: Պարտք եմ համարում աւելացնելու, որ բոլորովին անկարելի էր որոշել հայկական գերեզմանատանից մեզ վրա կրակողները հայերն էին, թէ գիւղերում թագնուած թուրքերը: Մինչև այդ Ալիեվը Դօլլիկով և Ասլան Աղասիբէգով պահակներին ուղարկեց շուկա իր գրագրի ընտանիքը բերելու: Պահակները վերադառնալով ընտանիքի հետ յայտնեցին, որ սկսուեց հայերի խանութների թալանը՝ սկսած Ակոբեանից: Սկսած 22-ից մինչև 24-ը տևեց ջարդ ու թալանը: 24-ին ես Ալիեվի ու պահակների հետ միասին ճանապարհուեցի դէպի հանքերը դինամիտը պահպանելու: Պրիստաւ Ալիեվը նկատելով, որ հայերը Կաղախլուից փախչում են դէպի Չարդախլու, թողեց ինձ և, իջնելով ներքև թուրքերի մօտ, վազեցրեց նրանց դէպի Չարդախլու, հրամայելով նրանց ոչ մի հայի ողջ չը թողնել, հէնց այդ միջոցին ճանապարհին սպանեցին երկու հայերի: Այդ մի և նոյն օրը, 24-ին աւերուեց և հրդեհուեց Կաղախլի գիւղը: 24-ին իջնելով Գեօտաբէգ, ես այնտեղ գտայ իմ թարգման Ասատուրին և Զինգերի գործակալ Բէրգխեանցին իմ բնակարանում: 25-ին ինձ մօտ եկան 15 հոգի զինուած թուրք և պահանջեցին իրանց յանձնել այն երկու հայերին: Ես աշխատում էի համոզել նրանց, որ նրանք վրացիներ են, բայց նրանք ոյժով դուրս խլեցին նրանց իմ ձեռքից և տարեցին միւս գերիների հետ միասին Փուրգօնում, իբրև թէ ուղարկելու բոլորին Չարդախլու: Պրիստաւ Ալիեվը առաջարկում էր ինձ նոյնպէս նրանց հետ միասին գնալ Չարդախլու, բայց որովհետև ինձ նախազգուշացրել էին, որ ուզում են սպանել ինձ, ուստի հայերին Փուրգօնով ճանապարհեցի Չարդախլու ութ պահակների հսկողութեամբ, բայց հազիւ փուրգօնները անցել էին 200 սաժէն,

երբ զալով տունն ընկնող հայերի վրայ, սպանեցին բոլոր պատմարդկանց և մի կնոջ: Փախչելով ազատուեցին տասը կին, իմ Թարգմանը, Զէնդերլի գործակալ Բերգիեանցը և մի մանուկ: Քիչ յետոյ ներս խուժեցին ինձ մօտ Թուրքերը, դուրս քարշեցին նրանց և տանելով կամուրջի մօտ՝ սպանեցին, նախապէս խլելով այդ երկու հայերից Մասուդէրի ու Սմիրդ-Կիտօնի տարճանակները, որոնց ես ուզում էի իմ այս յայտարարութեանս հետ ներկայացնել, բայց պրիստաւ Ալիեվը այդ տարճանակներից մէկը ինքը վերցրեց, իսկ միւսը տուեց տանուտէրին պահելով, որ նա նրանց հարկաւոր է: Թուրքերի Գետաբէկից հեռանալուց յետոյ, ես հողին յանձնեցի 18 հայեր և էլի 7 հոգի, ընդամէնը 25 հոգու: Իսկ իմ ստացած տեղեկութիւններով Աներում այրուած են 50 հայեր, կանայք, երեխաներ և պատմարդիկ: Նոյեմբերի 27-ին հայ կանանց անփորձ ուղարկեցի Զարդախլու. բայց երկու աղջիկներ 23-ից սկսած մինչև օրս էլ գտնւում են պրիստաւ Ալիեվի մօտ և մի քանի կանայք էլ ուղարկուած են Միխկինլի գիւղը, որոնց մինչև այժմս էլ պահում են այնտեղ: Միևնոյն ժամանակ պատիւ ունեմ յայտնելու Ձերդ Գերազանցութեան, որ ինձ յանձնուած ուշատակի պահակները հաղորդեցին, որ Թուրքերը նրանցից խլում են փամփուշտները, իսկ նրանցից մէկը՝ Թուրք Աստանը յայտնեց, որ պրիստաւ Ալիեվը տարճանակը նրա վրայ ուղղեց, հրամայելով իր պահակին խլել նրանից հրացանը այն պատճառով, որ Աստանը չէ միանում յանցաւոր Թուրքերին, բայց քիչ ժամանակից յետոյ աւագ պահակ Բիլիկովը յետ տալու նրանից հրացանը և յանձնեց Աստանին: Ըստ որում պատիւ ունեմ յայտնելու, որ, ինչպէս ես կատարելապէս համոզուեցի, պրիստաւ Ալիեվը իր պահակներով և Միխկինլինսկի հասարակութեան տանուտէր Մահմէդը միասին ամենագործունեայ մասնակցութիւն ունէին այդ բոլոր խայտառակութիւնների մէջ: Մինչև անգամ յիշեալ տանուտէրը համարձակուեց կանգնեցնել ինձ Սլավեանկա գիւղում, երբ իմացաւ, որ ես Գանձակ եմ գալիս, և խլեց ինձնից Բրաունինգ սեռակի տարճանակը, որ պատկանում է մի յոյնի: Աւելացնում եմ նոյնպէս, որ երբ Թուրքերը իմացան, որ ես արդէն պրիստաւի պաշտօնավարութիւնս սկսել եմ, ջարդ ու փշուր արին իմ գրասենեակը և արձակեցին բոլոր կալանաւորուածներին: Երբ այդ մասին ես հաղորդեցի պրիստաւ Ալիեվին՝ վերջինս ծիծաղելով պատասխանեց, որ աւելի լաւ, աշխատանքը քիչ կը լինի և աւելացրեց, որ նա այլ ևս չէ ծառայելու և գնում է իւր գիւղը ապրելու: Բաղաքենդ գիւղում հայերի դիակները մինչև այժմ էլ դեռ չեն հա-

ւարուած։ Դեկտեմբերի 7-ին 1905 թիւ։ Գանձակ քաղաքում։

Գրիստաւ Դ—մասի Դետարէգ աւանի՝ Ծէպիլլօ.

(Շարունակելի) Թաջբերունի.

ԲԱՑ ՆԱՄԱԿ ՔԱՀԱՆԱՆԵՐԻՆ

Իմ երեք տարուայ գործակալութեան միջոցին և մի քանի ուրիշ պատճառներով ես առիթ եմ ունեցել դիտելու, որ գիւղական քահանաները իրենց կատարած օրինակատարութիւններին արձանագրելիս մի քանի բաներում կամաւ թէ ակամայ զանցառու են լինում։ Սրանից առաջանում են որոշ անճշտութիւններ, որով՝ նախ խոշոր թիւրիմացութիւնների առիթ են դառնում կոնսիստորիաներում և երկրորդ չափաբերական մատեանները իրենց իսկական նպատակին չեն կարողանում ծառայել։

Նախարարակ կոչուող մեծ չափաբերական մատեանների նշանակութիւնը, որ բաժանուած են բոլոր եկեղեցիներին 1901 թուականին, պարզ չի գիտակցւում շատերի կողմից։ Այդ մատեանների պաշտօնական նշանակութիւնը շատ թէ քիչ չափով յայտնի է ամէնքին, բայց այդ մատեանները պաշտօնականից բացի ունեն էլի մի ուրիշ կարևոր ստատիստիկական-ժողովրդագրական տեղեկագրական նշանակութիւն։ Եթէ այդ մատեանները պահուեն ամենայն ճշտութեամբ, նրանք կը դառնան սահող իրականութեան ճշգրիտ հայելին։ Անջնջելի կերպով կը տպաւորուեն նրանց մէջ գիւղական կեանքի եկեղեցու և նրա պաշտօնեաների հետ կապ ունեցող բոլոր երևոյթները։ Ժամանակ կանցնի, գուցէ մեր գիւղերի դառն իրականութիւնը իրենով հետաքրքրուողները կունենայ, որոնք իրենց գիտութիւնով կամ կարողութիւնով գիւղերին օգնելու տրամադրութիւնով կը մօտենան նրանց։ Ա՛յ, այդ ժամանակ խնամքով և ճշտութեամբ գրուած մեր եկեղեցիների նախարարակները թանկագին ծառայութիւն կանեն։ Այդ մատեաններին նայելով դժուար չի լինի իմանալ ե՞րբ, ի՞նչ պատճառներից, այս կամ այն գիւղում ժողովուրդը աճել կամ պակասել է. տարուայ ո՞ր ամիսներում ծնունդը կամ մահը շատ է եղել. տարուայ եղանակները ի՞նչ ազդեցութիւն են ունենում մարդկանց հասակների վրայ և առհասարակ այս կամ այն գիւղի ժողովրդի առողջութիւնը և երկարակեցութիւնը տարիների ընթացքում ի՞նչ տատանումներ է ցոյց տալիս։ Եթէ այս տեղեկութիւն-